

ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

ԱԳՈՒԼԻՍԻ ԺԸ. ԴԱՐԻ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆ ԽՈՋԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻՎԱՆՈՒՄ՝

Բանալի բառեր՝ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, Ագուլիս, վաճառական, Խոջա Հովհաննես, պարսկերեն փաստաթուղթ, վավերագիր, հրովարտակ, հարկ:

Մատենադարանի կաթողիկոսական դիվանի պարսկերեն վավերագրերի հավաքածուի մեջ իրենց հանգրվանն են գտել Ագուլիսի Ս. Թովմա Առաքյալ վանքի արխիվային փաստաթղթերը, որոնք վերաբերում են ոչ միայն վանքի, այլև առհասարակ այդ հայկական բնակավայրի պատմությանը, քանի որ ԺԸ.-ԺԹ. դարերում այնտեղից արտագաղթող բնակիչներից շատերը վանքին են հանձնել ոչ միայն իրենց կալվածքներն ու այլ գույքը, այլև դրանց առնչվող փաստաթղթերը: Այս մասին է փաստում նաև կաթողիկոսական դիվանում պահվող ԺԹ. դարի մի հայերեն վավերագիր, որն իրենից ներկայացնում է նախիջևանից հեռացող անձանց՝ Ս. Թովմա Առաքյալի վանքին հանձնած կալվածքներին ու դրանց ձեռքբերմանը վերաբերող կալվածագրերի հայերեն հակիրճ բովանդակությունների ցանկ. «'ի սահմանին Օրտուպատու յԱգուլիս քաղաքի եղեալ տանց պարտեզաց և անդաստանաց և այլոց զապալաք, զորս տէարք նոցա ի ժամանակի ցրուելոյ իւրեանց և գաղթական լինիլոյ յալևայլ տեղիս բերեալ թողեալ են 'ի սուրբ Աթոռս վասն չափազանցն բռնաւորութեանց պարսկային տերութեան»²: Այս վավերագրերը ընդգրկված լինելով կաթողիկոսական դիվանի 1 է թղթապանակում, մինչև ԻԱ. դարի սկիզբը նկարագրված և ուսումնասիրված չեն եղել:

Ագուլիսի բնակչության ունեոր խավի մեծամասնությունը վաճառականներ էին³, ուստի այդ փաստաթղթերից շատերը վերաբերում են նրանց գործունեու-

¹ Հոդվածը հրատարակվում է ՀՀ գիտության կոմիտեի 20TTSH-046 թեմատիկ ծրագրի շրջանակներում:

² Մատենադարան (ՄՄ), Կաթողիկոսական դիվան (Կ/դ), թղթ. 242, վավ. 184:

³ Այս իրողությունը ակնհայտ է թեկուզ այն համգամանքից, որ Ագուլիսի վիմագրական ժառանգության մեջ անունների հետ առավել հաճախ հանդիպող տիտղոսը «խոջա»-ն է (Ա. Այվազյան, Նախիջևանի վիմագրական ժառանգությունը, հ. Բ, Անթիլիաս, 2005):

թյանը և ունեցվածքին: Մենք արդեն որոշ չափով ուսումնասիրել և առանձին հոդվածով ներկայացրել ենք Ագուլիսի ժէ. դարի հայ վաճառականներին վերաբերող Մատենադարանի պարսկերեն վավերագրերը⁴: Սույն հոդվածի շրջանակներում կանդրադառնանք միայն ժԸ. դարի առաջին կեսի այն վավերագրերին, որոնք վերաբերում են Ագուլիսի հայ վաճառական Սրապիոնի որդի Հովհաննեսին: Այդ վավերագրերի քանակը 100-ից ավելի է և թույլ է տալիս հանգամանալից ուսումնասիրել նրա կյանքի ու գործունեության որոշ մանրամասներ և իրողություններ:

Այդ փաստաթղթերը ներառում են 1699-1757 թթ. նամակներ, զանազան շարի՝ աթական-նոտարական փաստաթղթեր (առքուվաճառքի, վարձակալության, ունեցվածքի բաժանման կալվածագրեր), պարտամուրհակներ ու ստացականներ, տեղական կառավարիչների կողմից նրան ուղղված հանձնարարականներ, նազիր շահի, նրա եղբայր և Ատրպատականի փոխարքա Իբրահիմ Միրզայի, նաև հետագայում Նախիջևանն իրեն ենթարկած Ազատ խանի հրովարտականներ, որոնք լույս են սփռում նրա գործունեության հետ կապվող և ընդհանրապես Նախիջևանի հայության տվյալ շրջանի սոցիալ-տնտեսական պատմության տարբեր հարցերի ու իրողությունների վրա:

Ագուլիսը հայկական հնագույն բնակավայրերից էր, որը ժէ. դարում՝ վերածվում է Արևելյան Հայաստանի կարևոր առևտրատնտեսական կենտրոնի: Դեռևս ժե.-ժէ. դարերի բազմաթիվ ձեռագրերում Ագուլիսն անվանվել է գյուղաքաղաք⁵, իսկ հետագայում, ինչպես օրինակ ժԸ. դարի առաջին կեսի Դավիթ Բեկի պատմության մեջ՝ բազմամարդ «քաղաք»⁶: «Պատմութիւն Ղափանցոց»ի հեղինակը մատնանշում է, որ Ագուլիսում 1720-ականներին կար 10,000 տուն հայ⁷:

ԺԸ. դարի սկզբին Ագուլիսը ճիզվիտ միսիոներ Յ. Կրուսինսկին նկարագրում է որպես «ամենանշանակալի քաղաքը, որ հայերն ունեն Պարսկաստանում»⁸:

Խոջա Հովհաննեսին (վավերագրերում նրա անունը Ավանես է) և եղբորը՝

⁴ Ք. Կոստիկյան, «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը Ագուլիսի 17-րդ դարի հայ վաճառականների մասին», Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXXIII, պրակ I, Երևան, 2020, էջ 488-516:

⁵ Ժե. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա., կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 605, Հայերեն ձեռագրերի ժէ. դարի հիշատակարաններ, հ. Բ., կազմեցին Աշ. Հովհաննիսյան, Վ. Հակոբյան, Երևան, 1978, էջ 683, 684, 739, 744, 769, 826, Հայերեն ձեռագրերի ժէ. դարի հիշատակարաններ, հ. Գ., կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1984, էջ 104, 449, 473:

⁶ Դավիթ Բեկ կամ «Պատմութիւն Ղափանցոց, աշխատ. Հ. Սամուէլ վրդ. Արամեան, Վենետիկ, 1778, էջ 140, 167, 175:

⁷ Նույն տեղում, էջ 176:

⁸ J. Krusinski, *History of the Late Revolutions of Persia*, vol. I, London, 1733, p. 110.

հոջա Մարտիրոսին վերաբերող հնագույն փաստաթղթերը Մատենադարանում նրա հոր՝ Հովհաննեսի որդի Սրապիոնի (վավերագրերում՝ Սրափի[ա]ն, Սրաֆի[ա]ն) ձեռք բերած զանազան գույքի գնման պարսկերեն կալվածագրերն են: Դրանցից մեկը կազմվել է հիջրայի 1110 թ. զի Ղաադե ամսին (1699 թ. մայիս) Վերին Ագուլիսցի հոջա Ամիլ Վելիի դուստր Մարիամից Հովհաննեսի (Ավանես) որդի Սրապիոնի կողմից 10 թուման գումարով «մեկ ձեռք» տան, նրան կից այգու և ախոռի գնման առիթով: Ընդ որում՝ այդ փաստաթղթում Սրապիոնը նշվում է «ամգաթ ալ-թուլջար *اعده التجار*» (արաբ. վաճառականների գլխավոր) բնորոշմամբ⁹: Հիշյալ Սրապիոնը ամենայն հավանականությամբ եղել է Ագուլիսի մեծահարուստ և ազդեցիկ վաճառականներից, որովհետև հետագա՝ հիջրայի 1138 թ. (1725/6 թ.) մեկ այլ կալվածագրում, որ կազմվել է Վերին Ագուլիսում՝ մի արհեստանոցի գնման կապակցությամբ, նա նշվում է որպես «ռաիս ալ-նեսարի — *رئيس النصارى*» (քրիստոնյաների գլխավոր, առաջնորդ)¹⁰:

1720-ականներից սկսվում է Ագուլիսի շուրջ ծավալվող աղետալի իրադարձությունների մի շարք, որոնցից առաջինը կապվում է Սեֆյան թագաժառանգ Թահմասպ Բ-ի անվան հետ: Մինաս վարդապետը իր 1723 թ. մի զեկուցագրի մեջ նկարագրում է շահ Թահմասպ Բ-ի՝ Ագուլիսի բնակչության հանդեպ գործած դաժանությունները՝ մատնանշելով նաև Վրաց Վախթանգ թագավորի կողմից այնտեղ ուղարկված վրացիների դերը հայերի դեմ մարտում, որի ժամանակ մեծ թվով ագուլեցիներ են սպանվում¹¹:

Այս իրադարձությունն է թերևս դառնում Ագուլիսի և ընդհանրապես Նախիջևանի հայության գերակշիռ մասի օսմանամետ կողմնորոշման դրդապատճառը: Կարծում ենք նախիջևանահայության քաղաքական այս կողմնորոշման հարցում կարևոր դեր է խաղացել նաև տվյալ ժամանակաշրջանում Իրանի զգալի թուլացումը և վախը Օսմանյան իշխանությունների հնարավոր բռնություններից ու ավերածություններից:

Մինչ 1720-ականներին Սյունիքում, Երևանի նահանգում ու Արցախում օսմանյան զորքերի դեմ ուժգին դիմադրություն էր դիտվում, Նախիջևանը կարճ ժամանակում հայտնվում է Օսմանյան տիրապետության ներքո: Արդեն 1724 թ. օսմանցիները գրավում են Օրդուբադը և ապա նաև ողջ Նախիջևանը¹²: Օսմանյան տիրապետության շրջանում մինչև Նադիր շահի կողմից 1735 թ. Այսրկովկասի շրջանների վերանվաճումը տարօրինակ չէ օսմաներեն փաստաթղթերի

⁹ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1111:

¹⁰ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1135:

¹¹ *Армяно-русские отношения в первой трети XVIII века*, т. 2, ч. II, сост. П. Арутюнян, С. А. Тер-Авакимова, Ереван, 1967, док. 180, с. 33.

¹² Ա. Այվազյան, «Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թ.», ՊՔՀ, № 2, 1991, էջ 105-108:

առկայությունը Ագուլիսի հայ վաճառականներին վերաբերող վավերագրերի մեջ: Այս շարքից է 1730 թ. օսմաներեն շարիաթական նոտարական փաստաթուղթը, որն արձանագրում է Ագուլիսցի նույն հոջա Սրապիոնի (Սրաֆիոն) կողմից Դռնիսցի Մուրշիդ Դուլիի որդի Հաջի Մուհամեդից տնայնագործական դազգահի գնման գործարքը¹³: Օսմաներեն մյուս փաստաթուղթը գրվել է երկու տարի անց, արդեն Սրապիոնի որդի հոջա Հովհաննեսի կողմից մեկ կտոր այգու գնման կապակցությամբ¹⁴:

հոջա Հովհաննեսի հետագա շրջանի բոլոր փաստաթղթերը պարսկերեն են: հոջա Հովհաննեսը, ինչպես և նրա հայրը՝ Սրապիոնը, Ագուլիսի մեծահարուստ և ազդեցիկ վաճառականներից էր: Թերևս այս Հովհաննեսի մասին է Աբրահամ Կրետացի կաթողիկոսի հաշվետեւոր-օրագրում պահպանված հետևյալ հիշատակությունը, որտեղ նշվում է նրա կողմից էջմիածնի օգտին կատարված նվիրատվությունը. Ագուլիսի «Պարոն Յովանեսին օրհնեալ տունն ետուն բարեպաշտուիքն Ժ. (10) ելտուլ¹⁵ և է. (7) գեր մահպուլ և Ա. (1) զնճրլու¹⁶ և տղայք Ե. (5) ապասի¹⁷ և ինքն ժամուս Ժ. (10) ելտուլ...»¹⁸:

հոջա Հովհաննեսին վերաբերող 1739 և 1746 թթ. երկու վավերագրերը վկայում են Օսմանյան կայսրության տարածքում իրականացված վաճառականական գործունեության մասին: Մասնավորապես, այսպիսի փաստաթղթերից մեկը, որ գրվել է հիջրայի 1151 թ. զի հեջըե ամսին (1739 թ.) փաստում է, որ Ապարաներ (Բարանյար) գյուղի բնակիչների այդ (1738-9 թթ.) տարվա մալից¹⁹ որոշ գումար հոջա Հովհաննեսը հատկացրել էր նրանց Զմյուռնիայում (Իզմիր)

¹³ ՄՄ, Կ/դ, թղթ. 1գ, վ. 335:

¹⁴ ՄՄ, Կ/դ, թղթ. 1գ, վ. 341:

¹⁵ Թուրքերեն՝ ոսկյա կամ արծաթյա դրվագ:

¹⁶ Թե՛ «գեր մահպուլ»-ը և թե՛ «զնճրլու»-ն Օսմանյան կայսրությունում ԺԸ. դարում շրջանառվող ոսկեդրամների անվանումներն են (Այս և նախորդ հոլման օսմաներեն եզրույթների մեկնաբանության համար շնորհակալություն եմ հայտնում Անի Ժ. Ավետիսյանին):

¹⁷ Ժէ. դարի սկզբից շրջանառության մեջ «աբբասի» անվանումը օգտագործվում էր 144 հատիկ կշիռ ունեցող արծաթյա և ոսկյա դրամների համար՝ համապատասխանաբար համարժեք լինելով առաջինը 200 դինարի, իսկ երկրորդը՝ 2000 դինարի, թեև Իրանի Աֆղանական նվաճումից հետո այլևս չէին հատվում, սակայն հին աբասիները շարունակում էին շրջանառվել և ԺԸ. դարում մեկ աբասի անվանումը շարունակում էր կիրառվել 200 դինարի փոխարեն (P. Avery, B. G. Fragner, J. B. Simmons, Abbasi, Vol. I, Fasc. 1, p. 86, տե՛ս 'ABBASI – Encyclopaedia Iranica (iranicaonline.org) (accessed on 28 August 2021)):

¹⁸ ՄՄ, ձեռ. 7130, էջ 36բ:

¹⁹ Մալ (مال) – Գլխավոր եկամտահարկը և սեփականության հարկը, որ գանձվում էր ամեն տեսակի եկամտաբեր օբյեկտներից ու շենքերից, այգիներից, վարելահողերից, ջրաղացներից, ձիաբաններից, գութաններից, տներից, խանութներից և այլն: Մալը գանձվում էր ինչպես բնամթերով, այնպես և կանխիկ դրամով (Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտական, պրակ Ա., Երևան, 1956, էջ 112):

և Ստամբուլում գտնվող վաճառականներին, որպես յուրօրինակ²⁰: Այդ վաճառականների մի մասը նշված քաղաքներում նրա լիազոր անձին իրենց պարտքը վճարել էր, մի մասն էլ՝ ոչ: Չվճարածների ցուցակը գումարներով նշված է փաստաթղթում: Ուստի տեղի բնակիչները պարտավորվում են, որ դիվանի մալի փաստաթղթերով խոջա Հովհաննեսի տված գումարի իրենց մասը, որը ամբողջությամբ 18 թուման 8000 դինար էր, Զմյուռնիայում (Իզմիր) նրա լիազոր անձին կվճարեն իրենց մարդիկ: Հակառակ դեպքում այդ փաստաթղթերը հետ կբերվեն, և նշված անձի ըստ իրենց պարտամուրհակների կվճարեն, իսկ եթե շար՝ի²¹ ատյանին հասնի, կվճարեն նաև դատական գործընթացի ծախսերը²²:

Յուրօրինի վճարման նմանատիպ պարտավորագիր է նաև հիշքայի 1159 թ. ռաջաբ ամսին (1746 թ.) գրված փաստաթուղթը, որում նշվում է, որ Հաջի Հուսեյն Շոռուքիի որդի Մուլա Մուհամմադը երեք փաստաթղթերում նշված գումարը՝ 1453 նագիրի²³, պարտք է Սրապիոնի որդի խոջա Հովհաննեսին և այն պետք է վերադարձվի վերջինիս լիազոր անձին Ստամբուլում: Քանի որ փաստաթղթերում նշված գումարի վճարումը Ստամբուլում ուշանում է, այդ փաստաթղթերը հետ են բերվում: Այնուհետև դրանք հիշյալ մուլայի խնդրանքով նորից Ստամբուլ են ուղարկվում, որպեսզի այնտեղ գտնվող նրա եղբայրն ու հայրը վճարեն: Փաստաթղթով Մուլա Մուհամմադը պարտավորվում է, որ, եթե Ստամբուլում փաստաթղթերում նշված գումարից քիչ վճարեն, ապա ինքը մնացածը տեղում կտա, իսկ եթե բոլորովին չվճարեն, ապա ինքն ամբողջությամբ կվճարի՝ ներառելով շար՝ի դատի ծախսերը, եթե գործն այդ ատյանին հասնի²⁴:

Բացի այս վավերագրերից, խոջա Հովհաննեսի Օսմանյան տարածքով, մասնավորապես էրզրում, Բայազետով դեպի Հալեպ ձգվող առևտրական մայրուղով ընթացող տարանցիկ առևտրին մասնակցության մասին է փաստում նրան ուղղված ոմն Քազեմի նամակը²⁵:

Ագուլիսի հայ վաճառականությունը դեռ ժկ. դարում ակտիվորեն մասնակ-

²⁰ Յուրօրինի բառացի նշանակում է «հանապարհի պարտք»՝ վարկատվության մի ձև, որ հաճախ կիրառում էին հայ վաճառականները: Այս մասին խոսում է Շուշանիկ Խաչիկյանը և նշում, որ վարկատվության այդ տարբերակը բազմիցս հիշատակվում է Սարհադ Բանդուրյանի և Հարություն Լազարյանի հաշվեմատյաններում (Շ. Խաչիկյան, Նոր Զուլայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դարերում, Երևան, 1988, էջ 165):

²¹ Շար՝ (شرع) - Մուսուլմանական գլխավոր, կրոնական, հոգևոր օրենսդրական-դատական խորհուրդ, որին մասնակցում էին տվյալ վայրի բարձրաստիճան հոգևորականները (Հ. Փափազյան, Հրովարտական, պրակ Ա., էջ 117):

²² ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1233:

²³ Նադիրի - (نادرى) - Նադիր շահի օրոք Իրանում շրջանառվող արծաթ դրամ, որը կշռում էր 11,5 գրամ, համարժեք էր 10 շահիի կամ 500 դինարի և հայտնի էր նաև ռուսի անվամբ:

²⁴ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1301:

²⁵ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1255:

ցում էր Օսմանյան կայսրության հետ Սեֆյան Իրանի, ինչպես նաև Օսմանյան տարածքներով Եվրոպայի հետ զարգացող առևտրին: Այն, որ ագուլեցի վաճառականները Օսմանյան կայսրության որոշ քաղաքներում վաճառականական գործունեության մեջ էին ներգրավված, փաստում են նաև այդ քաղաքների դատական մատյանների արձանագրությունները²⁶: Կան տեղեկություններ նաև Ստամբուլում Ժէ.-ԺԸ. դարերում հաստատված ագուլեցիների և նրանց փոխկապակցված, համայնքային համատեղ գործունեության մասին: Մասնավորապես, այնտեղ գտնվող մի քանի ագուլեցիների և նրանց համայնքային կեցության մասին 1658 թ. մի հիշատակություն կա «Գիրք առական» կոչվող ձեռագրում. «Ըստամբուլ. թիւն ՌՃԷ. (1658)... ի խանն Վալիտայ, ես հիւանդացայ, պարոն Խոստրովին օգնութեամբ մեք Աքուլեաց ջումիա[թա], որ մէկ տեղ հաց էինք ուտ[ում], Աստուած անփորձ պահեաց: Թմը[ր] հենց Գալուստն իւր աղբ[ար] Բաղտասարն, Խոստրովին...»²⁷:

Սրապիտինի որդի Խոջա Հովհաննեսին վերաբերող նամակների մեջ առկա են այնպիսիք, որոնք փաստում են, որ նա մասնակից էր թանկարժեք զարդերի (մատանիներ, ապարանջան) առևտրին: Այդպիսին է ոմն Միրզա Նախից ստացված նամակը, որով խնդրվում է ուղարկել մատանիների գումարը, ինչպես նաև ոսկյա ապարանջանի ստացման մասին գրությունը²⁸: Միաժամանակ Խոջա Հովհաննեսը մասնակից էր Ագուլիսում և շրջակա բնակավայրերում արտադրվող կտորեղենի իրացմանը և այդ գործում համագործակցում էր Արևելյան Այսրկովկասի առևտրական ճանապարհներով առևտուր անող վաճառականների հետ, մասնավորապես, Գանձակով, Շաքիի ու Ղաբալայի տարածքներով քարավանային առևտրով զբաղվող Մուհամմադ Մո'ինի²⁹ և Մուհամմադ Ռեզայի հետ³⁰:

Արևելյան Այսրկովկասով անցնող տարանցիկ առևտրի հյուսիսային ուղին ակտիվացել էր ԺԸ. դարի սկզբից: Դա կապված էր Ռուսական կայսրության հզորացման և դեպի հարավ ընդարձակման՝ Ղրիմի խանության գրավմամբ Սև ծովի ափին հաստատման հետ: Կովկասով անցնող տարանցիկ առևտրի հյուսիսային մայրուղու վրա հատկապես ակտիվ էին հայ վաճառականները, որոնց հատուկ արտոնություններով քաջալերում էր Ռուսական կայսրությունը՝ սկսած Ժէ. դարից³¹:

Մյուս կողմից Իրանում ստեղծված անհանգիստ քաղաքական ու տնտեսա-

²⁶ Çakmak, Ömer, “On Yedinci Yüzyılda Osmanlı Topraklarında Bir Tüccar Grubu: Agulisli Ermeni Tüccarlar” *Ermeni Araştırmaları*, Sayı 67, 2020, s. 167-170.

²⁷ Հայերեն ձեռագրերի Ժէ. դարի հիշատակարաններ, հ. Գ, էջ 805:

²⁸ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1236, 1292:

²⁹ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1238, 1240, 1241:

³⁰ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1242:

³¹ Ե. Խաչիկյան, *Նոր Զուղայի...*, էջ 22:

կան դրուժյունը՝ կապված Սեֆյան պետության անկման և աֆղանական տիրապետության, Նադիր շահի բռնապետության և ապա նրա մահից հետո երկարատև անիշխանության ու ներքաղաքական անհանգստությունների հետ, դրդում էր հայ վաճառականներին իրենց առևտրական կապիտալով տեղափոխվելու ավելի ապահով վայրեր և այդ վայրերից ծավալել իրենց վաճառականական գործունեությունը:

Խոջա Հովհաննեսի վաճառականական գործերին մասնակից էր վերը հիշատակված Մոհամմադ Մո'ինը³²: Պահպանվել են խոջա Հովհաննեսին ուղղված նամակները, որոնք տեղեկություններ են պարունակում ինչպես նրա վաճառականական գործերի³³, այնպես էլ Նախիջևանի հայության տնտեսական դրության մասին³⁴:

Պարսկերեն որոշ վավերագրերի քննությունից պարզ է դառնում, որ խոջա Հովհաննեսը, այնտեղի Մելիք Մաթոսի ու Մելիք Ֆռանգյուլի հետ մասնակցել է Վերին ու Ներքին Ագուլիսների և Նախիջևանի մի շարք այլ բնակավայրերից (Օրդուբադ, Վանանդ, Յայջի, Ղարաղուշ, Շոռութ, Տերունիս, Սուլթանբեկ, Ազատ, Չերան, Շեյխմահմուդ, Դիգին և այլն) հարկերը պետությանը փոխանցելու գործընթացին: Այդ իրավունքը նրանց տրված է եղել նշված բնակավայրերի ներկայացուցիչների անունից 1738 թ. 28 հայատառ ու արաբատառ կնիքներով հաստատված մի մահզարի³⁵ համապատասխան³⁶ Ատրպատականի փոխարքա և Նադիրի եղբայր Իբրահիմ Միրզայի հիշրայի 1151 թ. (1738/9 թ.) հրապարակած հրամանագրով: Այդ հրամանի բովանդակության համաձայն՝ դա կատարվում է Նախիջևանի մի շարք գյուղերի հայ բնակիչների նկատմամբ շարաշահումները վերացնելու նպատակով³⁷: Ըստ որոշ փաստաթղթերի՝ խոջա Հովհաննեսն ու մյուսները գյուղական համայնքների փոխարեն երբեմն նախապես վճարել են այդ հարկերը, և մի շարք գյուղերի ավագանու ներկայացուցիչներ ու այլ բնակիչներ պարտք են եղել նրան: Այդ անձանց ցուցակը գրանցված է Ատրպատականի փոխարքա և Նադիր շահի եղբայր Իբրահիմ խանի կնիքով հաստատված մի փաստաթղթում³⁸:

³² ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1238, 1240:

³³ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1236, 1238, 1239, 1242, 1255, 1264:

³⁴ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1265:

³⁵ **Մահզար** (محضر) – Համախոսական (կամ համաձայնության գիր): Մահզար էին կոչվում որևէ իրողություն հաստատելու համար կազմված ընդհանրական համախոսական վկայագրերը: Շահական հրովարտակներում հաճախ է նշվում այս փաստաթղթերի հիման վրա նրանց հրապարակված լինելու մասին (**Ք. Կոստիկյան**, *Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, հրովարտակներ*, պրակ Գ, Երևան, 2005, վավ. 11, 14, 27, 57, 65): Հայկական աղբյուրներում այս փաստաթղթերը կոչվել են «մահսեռ, մահսառ, մահսարական»:

³⁶ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1217:

³⁷ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1216:

³⁸ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1209:

1739 թ. Ազատ, Ապարաներ, Դերն և Դյուբլուն գյուղերի հարկագումարների հաշվարկը և դրանց վճարման ստացականները բովանդակող փաստաթղթերը՝ տրված Խոջա Հովհաննեսի անունով, փաստում են, որ այդ գյուղերի հարկային հարցերով նա անձամբ է զբաղվել, և հետևաբար վերը նշված գյուղերի մնացած մասով զբաղվել են Մելիք Մաթոսը և Մելիք Ֆռանգյուլը³⁹:

Ըստ ամենայնի, այս տիպի աշխատանքը Խոջա Հովհաննեսը հայ մելիքների, ինչպես նաև մահմեդական պաշտոնյաների հետ միասին իրականացնում էր ինչ-ինչ հանգամանքներից ելնելով, միգուցե իր առևտրական գործունեության համար որոշ հնարավորություններ ունենալու և կապերը մահմեդական պաշտոնյաների հետ ընդլայնելու նպատակով: Ինչևէ, պահպանված վավերագրերից մեկը փաստացի մատնանշում է այն, որ այդ տիպի աշխատանքի էլ ավելի մեծ ծավալից նա խուսափել է իր խնդրագրի հիման վրա 1738 թ. Ատրպատականի փոխարքա Իբրահիմ Միրզայի անունից հրապարակված հրամանագրով: Այդ հրամանագրով արգելվում էր նրան ծանրաբեռնել Նախիջևան քաղաքի ու շրջակա մյուս այն բնակավայրերի պետական հարկագանձման գործերով, որոնք նրան չեն հանձնարարված⁴⁰:

Խոջա Հովհաննեսն իր եղբոր՝ Մարտիրոսի հետ հողային կալվածքներ ուներ Ագուլիսում, Տրունիսում, Վանանդում ու շրջակա մի քանի այլ վայրերում: Նրան էին պատկանում նաև Օրդուբադում մեկ քար ջրաղաց⁴¹, երկու մահմեդականների հետ համատեղ՝ մեկ իջևանատուն ու չիթ պատրաստելու արհեստանոց, որը 1720-ականներին վարձակալության էին տալիս⁴²: Պահպանվել են ինչպես վերը նշված կալվածքների գնմանը վերաբերող փաստաթղթերը⁴³, այնպես էլ նրանց համար իշխանություններին վճարված որոշ հարկերի դիմաց վերցված ստացականները⁴⁴, որոնք որոշակի տվյալներ են պարունակում Նախիջևանի այդ շրջանի սոցիալ-տնտեսական պատմության հարցերի շուրջ:

Մասնավորապես, 1736-1739 թթ. վավերագրերի բովանդակությունից պարզ է դառնում, որ իրենց հողային սեփականության համար Ագուլիսի վաճա-

³⁹ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1222-1229:

⁴⁰ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1221:

⁴¹ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1200:

⁴² ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1164:

⁴³ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1132, 1183, 1205, 1212, 1214, 1295:

⁴⁴ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1174, 1185, 1210, 1290, 1291:

ռականները վճարել են մալոջհաթ, վջուհաթ⁴⁵, մադադ-ե խարջ⁴⁶ հարկերը, հաճախ որպես դասթանդազ⁴⁷:

Դասթանդազ (دست انداز) եզրը կազմված է «դասթ – دست» (ձեռք) գոյականից և «անդախթան-انداختن» (նետել) բայից և բառացի նշանակում է «ձեռք նետող», «ձեռք ձգող»: Խոսքը վերաբերում է պետական պաշտոնյաների կողմից գանազան պատրվակներով ռայաթներից գանձվող տուրքերին, երբ նրանք, այսպես ասած, «ձեռք էին երկարում» ռայաթների ունեցվածքին և փորձում դրամ կամ այլ արժեքավոր իրեր շորթել նրանցից⁴⁸: Այսինքն, դրանք գանձվել են հավելյալ կերպով:

Հետագա շրջանի, օրինակ, 1742-3 թթ. ստացականներում վճարված հարկերի քանակն ավելանում է, ընդ որում՝ ի հաշիվ արտակարգ դեպքերում ու ռազմական գործողությունների ընթացքում գանձվող ավարիզաթ⁴⁹ և սոյուր-սաթ⁵⁰ հարկերի⁵¹: Դա այն շրջանն է (1741-1743 թթ.), երբ Նադիրը մի քանի անհաջող արշավանք է ձեռնարկում Կովկասում դադստանցիներին հպատակեցնելու նպատակով⁵²:

Նադիրի՝ վաճառականների հանդեպ անարդար վերաբերմունքի մասին փաստերը վկայված են աղբյուրներում նրա իշխանություն հենց սկզբից: Աբրահամ Երեանցու հաղորդմամբ դեռ 1730 թ. Նադիրի հրամանով բռնագրավվում է Համադանում գտնվող հայ վաճառականների ողջ ապրանքը, իսկ նրանց բաց են թողնում⁵³: Նադիրի բռնապետությունն ու դաժան վերաբերմունքը չի

⁴⁵ «վջուհաթ – وجوهات – «վաջհ – وجه» (զումար) բառի կրկնակի հոգնակի ձևն է (وجوه وجوهات): Այս անվան տակ հասկացվում էին առհասարակ այն բոլոր հարկերը, որոնք գանձվում էին կանխիկ դրամով: Աղբյուրներում հանդիպում է նաև «թավաջջուհաթ – ثوججات», «մութավաջջեհաթ – متوججات» ձևերով (Հ. Փափազյան, *Հրովարտականք*, պրակ Ա, էջ 121):

⁴⁶ Մադադ-ե խարջ – (مدد خراج) Բառացի թարգմանվում է որպես ծախսերի համար նպաստ: Հարկային առանձնաշնորհման մի տարբերակ է, որ տրվում էր որոշ պաշտոնյաների: Այն գանձվում էր դեռևս Սեֆյան ժամանակաշրջանում (*Tadhkirat al-mulūk, A manual of Safavid Administration (circa 1137/1725)*, Persian text in Facsimile, translated and explained by V. Minorsky, London, printed by W. Heffer and sons LTD., 1943, pp. 109, 183):

⁴⁷ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1174, 1185:

⁴⁸ Հ. Փափազյան, *Հրովարտականք*, պրակ Ա, էջ 107:

⁴⁹ Ավարիզաթ (عوارضات) եզրույթի տակ հասկացվում էր ռայաթների պարտադիր աշխատանքը գանազան արտակարգ պատահարների ժամանակ: Այս պարտավորությունը ևս շատ հաճախ փոխարինվում էր դրամական տուրով:

⁵⁰ Սոյուրաթ կամ սուրաթ (سورسات) – *Ռայաթների* կողմից տվյալ վայրում գտնվող գործի ապահովումը մթերով, նաև ընդհանրապես բանակի գլխավոր ուժերի համար պարենի ու մթերքի մատակարարումը, որը հաստատված էր հատուկ մատայաններով:

⁵¹ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1290, 1291:

⁵² Ernest Tucker, “Nader Shah”, *Encyclopedia Iranica*, online edition: NADER SHAH – Encyclopaedia Iranica (iranicaonline.org) accessed on September 26, 2021

⁵³ Աբրահամ Երեանցի, *Պատմություն պատերազմաց*, Երևան, 1938, էջ 53:

շրջանցում Նոր Զուղայի հայ վաճառականներին⁵⁴: Նախիջևան քաղաքի հայ մեծահարուստները ևս զրպարտության հետևանքով մեծապես տուժում են Նադիր շահի անողորմ վերաբերմունքից⁵⁵:

Նրա իշխանության հատկապես վերջին շրջանին բնորոշ ծանր հարկային քաղաքականությունը, տուգանքների ձևով գանձվող մեծ գումարները, դրամաշորթությունն ու չարաշահումները չէին կարող չարտացոլվել այդ շրջանի Ագուլիսի հայ վաճառականներին վերաբերող պարսկերեն վավերագրերում:

Այս առումով շատ պատկերավոր է Խոջա Հովհաննեսի՝ այս մասին հանգամանալից պատմող խնդրագիրը, որում նշվում է, որ որոշ հայերի ու մահմեդականների վրա հարկեր են նշանակվել, և նրանից ևս գանձվել է 320 թուման⁵⁶:

Անօրինական հարկերի և պաշտոնյաների կամայական պահանջների խնդրով Խոջա Հովհաննեսը դիմել է նաև Նադիր շահին և ստացել նրա՝ հիշրայի 1155 թ. գի դաադե ամսի (1743 թ. հունվար) հրովարտակը: Խնդրագրի մասում նշվում է, որ իրենց բնակչության վայրում իրենք բոլոր հարկերը վճարում են, բայց տարբեր վիլայեթների պաշտոնյաները դասթանդազ, շիլթադ⁵⁷ ու այլ չարաշահումներ են կատարում վաճառականների հանդեպ, որի պատճառով իրենք չեն կարողանում դիվանի հարկերը վճարել: Պաշտոնյաների չարաշահումների և կամայականությունների մեջ հայ վաճառականը մատնանշում է ապրանքի դիմաց ինքնարժեքից ցածր գնի վճարումը և չունեցած ապրանքների պահանջը, որոնք բնականաբար խաթարում էին առևտրի բնականոն ընթացքն ու զարգացումը: Նադիրի հրամանով պաշտոնյաների հիշյալ չարաշահումները արգելվում են⁵⁸: Այնուամենայնիվ, նույն ժամանակահատվածում Նոր Զուղայի հայ վաճառականների ձեռք բերած հրովարտականերում ևս պահպանվել են փաստեր՝ պաշտոնյաների նման գործելակերպի վերաբերյալ⁵⁹, որը թույլ է տալիս ենթադրել, որ դրանք արվում էին կենտրոնական իշխանության թողտվությամբ, եթե ոչ նրա հրահանգով: Նադիրի իշխանության հատկապես վերջին շրջանում, երբ նրա ռազմական ձեռնարկումները Կովկասում ձախողվում են, պետության կրած վնասները հիմնականում փակվում էին երկրի բնակչությանից գանձվող ծանր հարկերի ու տուգանքների միջոցով:

Նախիջևանի հայության վիճակն էլ ավելի ծանրանում է Նադիր շահի մա-

⁵⁴ A Chronicle of the Carmelites in Persia, v. I, London, 1939, p. 649, Ք. Կոստիկյան, «Նոր Զուղան Իրանի Նադիր շահի իշխանության շրջանում», ՀՄ, Վիեննա-Երևան, 2016, թիվ 1-12, էջ 273-215:

⁵⁵ Մ. վ. Զաւյան, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 815:

⁵⁶ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1286:

⁵⁷ Շիլթադ (شلتاق) - Այս եզրույթով անվանում էին այն անօրինական հարկերը, որոնք գանձվում էին ռայաթներից պետական պաշտոնյաների կողմից զանազան կեղծ ու հնարավոր պատճառներով (Հ. Փափազյան, Հրովարտականեր, պրակ Ա, էջ 117):

⁵⁸ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1288:

⁵⁹ Ք. Կոստիկյան, «Նոր Զուղան Իրանի Նադիր շահի իշխանության շրջանում», էջ 303-308:

հից հետո, հատկապես Ատրպատականում իշխանությունն իր ձեռքը վերցրած Ազատ խան Աֆղանի տիրապետության շրջանում: Վերջինիս վայրագություններից տուժում են նաև Ագուլիսի հայերը, որոնք հրաժարվում են պահանջված գրամական տուրքերը վճարել⁶⁰: Ըստ Ջամչանի՝ աֆղանների զորքը 1752 թ. ներխուժում է քաղաք, անխնա կողոպտում այն, իսկ բնակիչներից շատերին կոտորում և գերեվարում: Սիմեոն Երևանցու հիշատակարանում պահպանված տեղեկության համաձայն՝ 1754 թ. Ազատ խանը մեծ զորքով մտնում է Նախիջևան և ավերում այն, որի ընթացքում մեծապես տուժում է նաև Ագուլիսը⁶¹: Այս հաղորդումները միմյանց լրացնելով վկայում են 1750-1755 թթ. Ատրպատականում և Նախիջևանում իշխանությունն իր ձեռքը վերցրած Ազատ խան Աֆղանի գործած ավերածությունների ու հարստահարիչ տիրապետության մասին:

Ագուլիսի այս աղետալի ավերածություններին նախորդող շրջանում է նույն Ազատ խանից ձեռք բերված եղել 1750 թ. հրովարտակը, որով կարգադրվում է Նախիջևանի կառավարիչ Բահման խանին՝ հոջա Հովհաննեսի պարտքը Մա'սում խանի մոտ եղած ծծումբի երեք խարվարից վճարել⁶²:

Խոջա Հովհաննեսի անունը պարսկերեն վավերագրերում հանդիպում է մինչև 1754 թ.⁶³, իսկ եղբոր՝ Մարտիրոսինը՝ մինչև 1755/6 թ.: Նրանք երկուսն էլ թերևս արտագաղթել են, որովհետև վերջին շրջանի վավերագրերը գրված են Խոջա Մարտիրոսի անունից, որոնցում նշվում է իր եղբոր Ագուլիսում բացակա լինելու մասին: Վավերագրերից վերջինն էլ Նախիջևանի Հեյդար խանի հիշրայի 1169 թ. (1755/6 թ) հրամանագիրն է, որով վերջինս թուլյատրում է Խոջա Մարտիրոսին իր որոշ գումարային խնդիրները կարգավորելու նպատակով գնալ Ղարադաղ⁶⁴:

Մարտիրոսը Ագուլիսից հեռանալիս, ըստ ամենայնի, իրենց ժառանգական կալվածքները արխիվային փաստաթղթերով հանձնել է Ս. Թովմա Առաքյալի վանքին, և այդ ճանապարհով դրանք վանքի արխիվի հետ հետագայում հայտնվել են Մատենադարանի կաթողիկոսական դիվանում:

Այսպիսով, Խոջա Հովհաննեսի Մատենադարանում պահվող պարսկերեն փաստաթղթերը կարելի է համարել ժԸ. դարի առաջին կեսի Նախիջևանի հայ վաճառականությանը վերաբերող արժեքավոր պատմական վավերագրերից: Դրանցում պահպանված զանազան տեղեկություններն ու տվյալները հնարավորություն են տալիս ուսումնասիրելու ոչ միայն Ագուլիսի այս մեծահարուստ և

⁶⁰ Այդ մասին մանրամասն տե՛ս Մ. Վ. Ջամչանց, Հայոց պատմություն, հ. Գ, էջ 853-4:

⁶¹ Դիվան Հայոց պատմության, գիրք Ը., Սիմեոն կաթողիկոսի յիշատակաբանը, Թիֆլիս, 1908, էջ 220:

⁶² ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1313:

⁶³ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1330, 1332:

⁶⁴ ՄՄ, Կ/դ, թղթ. 1է, վավ. 1345:

ազդեցիկ վաճառականի կյանքի ու գործունեության մանրամասները, նրա դերը այդ առևտրատնտեսական կարևոր կենտրոնի հասարակական-քաղաքական կյանքում, այլև նորովի լուսաբանելու այդ բնակավայրի և հարակից գյուղերի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության այդ փուլի որոշ իրողությունները:

KRISTINE KOSTIKYAN

**THE DOCUMENTS OF KHOJA HOVHANNES, AN 18TH CENTURY
ARMENIAN MERCHANT OF AGULIS, IN THE ARCHIVE
OF THE CATHOLICOSATE OF MATENADARAN**

Key words: Matenadaran, archive of the Catholicosate, Agulis, merchant, Khoja Hovhannes, Persian document, edict, tax.

Together with the archive of St. Tovma monastery, the documents of some Armenian merchants of Agulis have survived in the archive of the Catholicosate of Matenadaran. A considerable number (about 100) of these documents belonged to Khoja Hovhannes, the son of Srapion, a wealthy merchant of Agulis in the first half of 18th century. On the basis of these documents, the article discusses the life and activities of this merchant, with a parallel research on the history of Agulis in that period. The study has allowed to trace some of his trade activities in Agulis, the Ottoman Empire and his cooperation with the merchants involved in the transit trade through Eastern Transcaucasia. Some details of his estates in Agulis, Vanand, Terunis etc. and his other possessions in Ordubad are revealed, as well as his administrative and social activities. By the example of the edicts granted to Khoja Hovhannes, the article refers to the problems and difficulties which the merchants faced in Iran under the rule of Nadir Shah and the following years till 1754.

КОСТИКЯН КРИСТИНЕ

**ДОКУМЕНТЫ АГУЛИССКОГО КУПЦА XVIII ВЕКА ХОДЖИ
ОВАНЕСА В АРХИВЕ КАТОЛИКОСАТА В МАТЕНАДАРАНЕ**

Ключевые слова: Матенадаран, архив Католикосата, Агулис, купец, Ходжа Ованес, персидский документ, указ, налог.

В Матенадаране, в архиве армянских католикосов, а также в архиве монастыря Св. Фомы в Агулисе сохранились документы некоторых агулисских

купцов. Значительную часть (около 100 единиц) этих материалов составляют документы, принадлежащие предприимчивому купцу 18-го века Ходже Ованесу, сыну Срапиона из Агулиса. В статье на основании этих документов исследуется жизнь и деятельность этого купца параллельно с событиями истории Агулиса того периода. Документы позволяют проследить некоторые из его торговых сделок в Агулисе, Османской империи и сотрудничесто с купцами, вовлеченными в транзитную торговлю через Восточное Закавказье. Выявлены также некоторые детали, касающиеся его имений в Агулисе, Вананде, Терунисе, имущества в Ордубаде, а также его социально-административной деятельности. На примере грамот, полученных Ходжой Ованесом, рассмотрены также проблемы и трудности, с которыми сталкивались купцы Ирана в период правления Надир шаха и последующие годы, вплоть до 1754 г.